Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-832-29.12.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 9. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող՝ այդ թվում վեճի	

առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացվող հայցադիմումների համար՝	
ա. դրամական պահանջով	հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 6-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 25 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
2) հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
3) հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 15-ապատիկի չափով
4) արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
5) օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 50-ապատիկի չափով
6) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումների համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
7) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման, արբիտրաժին դատական	բազային տուրքի 4-ապատիկի չափով

աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումների համար՝	
8) գործը պարզեցված վարույթի կարգով քննության ենթակա լինելու կամ քննվելու դեպքում հայցադիմումների համար՝	
ա. դրամական պահանջով	հայցագնի 2 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 1.5-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջով	բազային տուրքի 10-ապատիկի չափով
9) վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումների համար՝	բազային տուրքի 1.5-ապատիկի չափով
10) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝	
ա. դրամական պահանջի գործերով	վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 4 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, ապա հայցագնի 4 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 15-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 15 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջի գործերով	բազային տուրքի 30-ապատիկի չափով

գ. միայն վճռի պատճառաբանական մասի դեմ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
դ. գործին մասնակից չդարձած անձանց բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ե. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
զ. ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 15-ապատիկի չափով
է. օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 60-ապատիկի չափով
ը. օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
թ. գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ժ. կատարողական թերթը կատարման	բազային տուրքի 10-ապատիկի չափով

ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների դեմ բողոքներով	
ժա. վճարման կարգադրության դեմ վերաքննիչ բողոքներով	բազային տուրքի 3-ապատիկի չափով
11) վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	
ա. դրամական պահանջի գործերով	վճռաբեկ բողոքում նշված վիճարկվող գումարի, 5 տոկոսի չափով, իսկ եթե վերաքննիչ դատարանում վիճարկվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, և վերաքննիչ դատարանը կայացրելը է բողոքն ամբողջությամբ բավարարելու կամ մերժելու մասին որոշում, ապա հայցագնի 5 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 30-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 10 000-ապատիկից

բ. ոչ դրամական պահանջի գործերով	բազային տուրքի 40-ապատիկի չափով
գ. միայն որոշման պատճառաբանական մասի դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
դ. գործին մասնակից չդարձած անձանց բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
ե. վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքներով	բազային տուրքի 40-ապատիկի չափով
զ. ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
է. օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 70-ապատիկի չափով
ը. օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 40-ապատիկի չափով
թ. ամբողջությամբ կամ մասնակիորեն	բազային տուրքի 20-ապատիկի չափով

վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն գործի վարույթը կարճելու, ինչպես նաև ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	
ժ. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար՝ բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի	բազային տուրքի 10-ապատիկի չափով
2) այն վարչական ակտերի վիճարկման պահանջով հայցադիմումների համար,	

որոնցով կիրառվել է դրամական արտահայտությամբ վարչական պատասխանատվության միջոց հետևյալ չափերով՝	
ա. մինչև 10 հազար դրամը ներառյալ	բազային տուրքի 4-ապատիկի չափով
բ. 10 հազար դրամից մինչև 100 հազար դրամը ներառյալ	բազային տուրքի 5-ապատիկին գումարած 10 հազար դրամը գերազանցող մասի 1 տոկոսի չափով
գ. 100 հազար դրամից մինչև մեկ միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 10-ապատիկին գումարած 100 հազար դրամը գերազանցող մասի 0.5 տոկոսի չափով
դ. մեկ միլիոն դրամից մինչև հինգ միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 15-ապատիկին գումարած մեկ միլիոն դրամը գերազանցող մասի 0.25 տոկոսի չափով
ե. հինգ միլիոն դրամից մինչև 10 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 25-ապատիկին գումարած հինգ միլիոն դրամը գերազանցող մասի 0.1 տոկոսի չափով
զ. 10 միլիոն դրամից մինչև 50 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 30-ապատիկին գումարած 10 միլիոն դրամը գերազանցող մասի 0.05 տոկոսի չափով
է. 50 միլիոն դրամից մինչև 100 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 50-ապատիկին գումարած 50 միլիոն դրամը գերազանցող մասի 0.025 տոկոսի չափով
ը. 100 միլիոն դրամից ավել	բազային տուրքի 70-ապատիկին գումարած 100 միլիոն դրամը գերազանցող մասի 0.01 տոկոսի չափով,

	բայց ոչ ավել, քան բազային տուրքի 80-ապատիկը
3) հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների (հայցադիմումների) համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
4) վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
5) սույն մասի 2-րդ կետով նախատեսված վարչական ակտերի վիճարկման արդյունքում կայացված դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝	վարչական դատարանում համապատասխան վարչական ակտի վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 10-ապատիկի չափով
6) վարչական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացրած դատական ակտերի դեմ բողոքներով՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
7) գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոքներով	բազային տուրքի 10-ապատիկի չափով
8) վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	բազային տուրքի 30-ապատիկի չափով
9) սույն մասի 5-րդ կետով նախատեսված բողոքների քննության արդյունքում կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների	վարչական դատարանում համապատասխան վարչական ակտի վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած

համար՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
10) վերաքննիչ վարչական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացրած դատական ակտերի դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
11) ամբողջությամբ կամ մասնակիորեն դատական ակտը բեկանելու և գործի վարույթը ամբողջովին կամ դրա մի մասը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վճռաբեկ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով

3. «Սնանկության մասին» օրենքով սահմանված կարգով դատարաններ տրվող դիմումների, դատարանի վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) սնանկության դատարան ներկայացվող դիմումների համար՝	
ա. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար՝	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
բ. ֆիզիկական անձանց (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերին) սնանկ ճանաչելու դիմումների համար՝	բազային տուրքի 200-ապատիկի չափով
2) սնանկության դատարանի կայացրած վճիռների դեմ վերաքննիչ բողոքների համար՝	բազային տուրքի 30-ապատիկի չափով
3) սնանկության դատարանի կայացրած վճիռների դեմ բերված բողոքներով վերաքննիչ դատարանի որոշումների	բազային տուրքի 40-ապատիկի չափով

դեմ վճռաբեկ բողոքների համար՝	

4. Դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչներ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝	բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով
2) հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկած կատարողական թերթի թղթային պատճենը տրամադրելու համար՝	բազային տուրքի չափով
3) գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից ներկայացված կամ գործում առկա այլ փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝	բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով
4) գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից	պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի 50 տոկոսի չափով

պատճենահանված կրիչ տալու համար՝	
5) դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար՝	պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի 50 տոկոսի չափով

5. Արտարժույթով պահանջ ներկայացվելու կամ պահանջի վիճարկման դեպքում պետական տուրքը հաշվարկվում է համապատասխանաբար հայցադիմումը կամ բողոքը ներկայացնելուն նախորդող օրացույցային օրը Կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:»:

Հոդված 2. Օրենքի 9.1 հոդվածում «տասնապատիկի» բառը փոխարինել «30-ապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 22. Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները**

1. Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

1) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

2) հայցվորները՝ ալիմենտի գանձման, ալիմենտի չափի ավելացման, ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձին պատասխանատվության ենթարկելու, ալիմենտը ժամանակին չվճարելու համար տուգանք բռնագանձելու կամ ալիմենտային պարտավորությունների ուշացմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հայցերով.

3) հայցվորները՝ խեղման կամ առողջությանը պատճառված այլ վնասի, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

4) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

5) հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

6) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող հայցադիմումների (դիմումների) գծով.

7) արդարացվածները՝

ա. իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և ապօրինի դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով.

բ. նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով.

գ. ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով.

դ. նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով.

8) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով.

9) ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

ա. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի

կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների վերաբերյալ բողոքներով,

բ. մշակութային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

10) բողոք բերող անձինք՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքներով.

11) պետական մարմինները՝ սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքերում.

12) դիմողները՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումների համար.

13) դիմողները կամ հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29.3-րդ և 31.3-րդ գլուխներով նախատեսված գործերով.

14) հայցվորները՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով.

15) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

16) դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով.

17) ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված գործերով.

18) դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ դիմումներով.

19) ապաստան հայցողները և փախստականները՝

ա. ապաստանի հայցի և փախստականի ճանաչման վերաբերյալ ընդունված որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցերով.

բ. ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի շրջանակներում իրենց իրավունքների և երաշխիքների խախտման վերաբերյալ հայցերով.

20) հոգեբուժական կազմակերպությունները՝ քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

21) բժշկական կազմակերպությունները կամ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ քաղաքացուն բժշկական ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

22) հարկադիր կատարողը՝ կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ դիմումներով.

23) ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը և լուծարային կառավարիչը՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով.

24) պարտապանը՝ կամավոր սնանկության դիմումներով.

25) սնանկության գործով կառավարիչները (ժամանակավոր կառավարիչները)՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների համար, ինչպես նաև դատական ակտը իրենց վարձատրության մասով բողոքարկելու համար.

26) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր կողմից ներկայացվող հայցերով.

27) հայցվորները՝ պետական նպաստների (այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման), պետական կենսաթոշակների, սոցիալական ապահովության ծրագրերով վճարվող դրամական այլ վճարների, սոցիալական ապահովագրության վճարների նշանակման, վճարման, հաշվարկման, վերահաշվարկման և այլ հայցերով.

28) հայցվորը՝ Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերով.

29) դիմողները՝ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողին կամ այլ քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործերով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

3. Դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկվելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

4. Միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով պետական տուրք չի գանձվում:

5. Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար պետական տուրք չի գանձվում:»:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «ժզ» կետ.

«ժզ) ռազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ դատարանի կողմից մահացած ճանաչված զինծառայողի կամ այլ քաղաքացու ժառանգի դիմումի հիման վրա ժառանգության ընդունման կամ դրանից հրաժարման, ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տրամադրելու, օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ (բացառությամբ նվիրատվության պայմանագրերի վավերացման), 17-րդ և 21.2-րդ մասերով նախատեսված նոտարական գործողություններ իրականացնելու համար:»:

Հոդված 5. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետից հանել «կամ դատավորները» բառերը:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել նոր «բ1» կետ.

«բ1) երբ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, մերժել է այն հայցը, որով հայցվորը ազատված է եղել պետական տուրքի վճարումից.».

2) «գ» կետում «անձը» բառից հետո լրացնել «, կամ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը առանց քննության թողնելու դեպքում» բառերը.

3) լրացնել նոր «գ1» կետ.

«գ1) գործը ընդհանուր հայցային վարույթի կարգով վարույթ ընդունելուց հետո գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դեպքում.».

4) լրացնել նոր «դ1» կետ.

«դ1) եթե առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վճարման կարգադրությունը վերացնելու մասին՝ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու կամ վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության դեպքում.»:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ, 14-րդ, 17-րդ և 29-րդ կետերը, 3-4-րդ մասերը և սույն օրենքի 4-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների (դիմումների) և դրանց հիման վրա հարուցված գործերի նկատմամբ:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումների (դիմումների) քննության արդյունքում կայացված դատական ակտերի, այդ թվում՝ հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու մասին որոշումների բողոքարկման դեպքում կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը,

ներառյալ՝ դատարաններում պետական տուրքի գծով սահմանված արտոնությունները:

5. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումները (դիմումները) կամ բողոքները վերադարձնելուց հետո դրանք սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կրկին ներկայացնելու դեպքում դրանց նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

6. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումներում (դիմումներում) կամ բողոքներում նշված պահանջը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձելիս կիրառման են ենթակա մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

Լրամշակված

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

1.1. Տուրքի դրույքաչափերը

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (այսուհետ՝ Տուրք) համար պետական տուրքի դրույքաչափերը, չհաշված հետագայում համալրված Տուրքի տեսակները, փոփոխության չեն ենթարկվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» 1999 թվականի հոկտեմբերի 12-ի ՀՕ-4 օրենքի ընդունումից ի վեր: Արդյունքում Օրենքի գործող դրույքաչափերը չեն արտացոլում երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների առկա իրավիճակը: Այսպես, քննարկվող ժամանակահատվածում Հայաստանում էական փոփոխության են ենթարկվել որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, որոնք կարող են դրվել Տուրքի նախատեսվող դրույքաչափերի հաշվարկի հիմքում: Մասնավորապես,

- Համաշխարհային բանկի տվյալներով, մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը՝ ազգային արժույթով արտահայտված (այսուհետ՝ ՀՆԱ) 2000թ.-ին կազմել է 575,929.413 դրամ, իսկ 2019թ.-ին՝ 1,942,464.217 դրամ[1], **աճելով 3.37 անգամ,**
- միջին ամսական աշխատավարձը[2] 2000թ.-ի հունվար-նոյեմբեր ամիսների կտրվածքով կազմել է 22,706 դրամ[3], իսկ 2019թ.-ին՝ 182,673 դրամ[4], **աճելով 8.04 անգամ,**
- նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2004թ.-ի IV եռամսյակի միջին փաստացի գներով կազմել է 29,402.5 դրամ[5], իսկ 2020թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ 61,390.7 դրամ[6]՝ **աճելով 2.8 անգամ**,
- նվազագույն աշխատավարձի չափը 2003թ. դրությամբ կազմել է 13,000 դրամ, իսկ 2020թ.-ին՝ 68,000 դրամ, **աճելով 5.2 անգամ**,
- աղքատության ընդհանուր գիծը 2001թ.-ին կազել է 12,019 դրամ[7], իսկ 2018թ.-ին՝ 42,621 դրամ[8]՝ աճելով շուրջ **3.54 անգամ**,
- սպառողական գների ինդեքսը 2020թ.-ին ի համեմատ 2000թ.-ի հունվար ամսվա դրությամբ կազմել է 97.46%[9]՝ աճելով շուրջ **1.9 անգամ**:

---

[1] https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.KN?locations=AM

[2] Միջին ամսական աշխատավարձը վարձու աշխատողի համախառն վարձատրությունն է՝ հաշվի առած ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պահումները + աշխատավարձին հավասարեցված այլ վճարումների հաշվարկված գումարները (դրամական և բնեղեն արտահայտությամբ) հարաբերելով աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին թվաքանակին

[3] https://www.armstat.am/file/doc/687.pdf, էջ 6

[4] https://www.armstat.am/file/article/sv_03_20a_142.pdf, էջ 119

[5] https://www.armstat.am/file/article/sv_12a_04_62.pdf, էջ 210

[6] https://www.armstat.am/file/article/sv_03_20a_6200.pdf, էջ 345

[7] https://www.armstat.am/file/doc/652.pdf, էջ 145

[8] https://www.armstat.am/file/doc/99516748.pdf, էջ 118

[9] https://armstat.am/am/?nid=714

Արդյունքում, նշված սոցիալ-տնտեսական ցուցանիշները 2000թ.-ից մինչև 2020թ.-ի առաջին եռամսյակը աճել են **միջինում 4.1 անգամ**:

Մյուս կողմից, Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ նախորդ երկու տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ արդարադատության իրականացման ծախսերը գերազանցել են դատարանների կողմից հավաքագրված պետական տուրքի գումարները մինչև 4 և ավելի անգամ: Արդյունքում, 2018թ.-ից մինչև 2020թ.-ի առաջին եռմասյակի տվյալներով, «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքներով ՀՀ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ դատական դեպարտամենտին հատկացված և փաստացի ծախսված գումարների տարբերությունը միջինում կազմել է **մոտ 4 անգամ**. 2018թ.-ին փաստացի իրականացված ծախսերը կազմել են 8,936,155,000 դրամ, իսկ եկամուտները՝ 1,682,304,140 դրամ, 2019թ.-ի փաստացի իրականացված ծախսերը՝ 11,974,829,000 դրամ, իսկ եկամուտները՝ 2,181,408,540 դրամ, իսկ 2020թ.-ի առաջին եռմասյակի կտրվածքով փաստացի իրականացված ծախսերը՝ 1,947,434,000 դրամ, իսկ եկամուտները՝ 403,481,950 դրամ:

Կարելի է նաև փաստել, որ, առերույթ, այլ երկրներում Տուրքի չափերը էականորեն տարբերվում են ՀՀ-ում Տուրքերի չափերից[10]: Ըստ այդմ.

- Չեխիայի Հանրապետությունում Տուրքը կազմում է 600 չեխական կրոն (22 եվրո), եթե հայցագինը չի գերազանցում 15,000 կրոնը (546 եվրո), իսկ նշված արժեքը գերազանցելու դեպքում՝ հայցագնի 4%-ը[11]: Իր հերթին, Չեխիայում ամսական կտրվածքով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմում է 126 եվրո[12]: Այսինքն, Տուրքի նվազագույն արժեքը կազմում է նվազագույն սպառողական զամբյուղի շուրջ 17.5%-ը: Այնինչ, ՀՀ-ում Տուրքի նվազագույն դրույքաչափը (1,500 դրամ) ներկայումս կազմում է նվազագույն սպառողական զամբյուղի (61,390.7 դրամ) շուրջ 2.4%-ը:

---

[10] Միջազգային փորձի հետ համեմատության համար հիքմ են ընդունվել նվազագույն սպառողական զամբյուղի և Տուրքի համար սահմանված նվազագույն դրույքաչափի հարաբերակցությունը:

[11] Study on the Transparency of Costs of Civil Judicial Proceedings in the European Union,COUNTRY REPORT, THE CZECH REPUBLIC, Submitted by Milan Chladek Country Expert, DECEMBER 30, 2007, էջ 18

[12] http://ec.europa.eu/social/BlobServlet?docId=15037&langId=en, էջ՝ 1

- Ռուսաստանի Դաշնությունում գործում է Տուրքի հաշվարկման աստիճանաբար աճող մեխանիզմ: Մասնավորապես, գույքային բնույթի պահանջների դեպքում, եթե հայցագինը չի գերազանցում 20,000 ռուսական ռուբլին՝ հայցագնի 4%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 400 ռուսական ռուբլին[13]: Ընդ որում՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ՌԴ-ում, ըստ որոշ ոչ պաշտոնական աղբյուրների, կազմում է 11,200 ռուբլի[14]: Այսպիսով, ՌԴ-ում Տուրքի նվազագույն դրույքաչափը (400 ռուբլի) կազմում է նվազագույն սպառողական զամբյուղի (11,200 ռուբլի) 3.5%-ը:

- Էստոնիայում սահմանվում է Տուրքի դրույքաչափերի աղյուսակ, ըստ որի, մինչև 350 եվրո հայցագնի դեպքում գանձվում է 75 եվրո Տուրք (հայցագնի շուրջ 21.5%)[15]: Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը Էստոնիայում կազմում է 144 եվրո[16]: Այսպիսով, Էստոնիայում Տուրքի նվազագույն դրույքաչափը (75 եվրո) կազմում է նվազագույն սպառողական զամբյուղի (144 եվրո) մոտավորապես 52%-ը:

- Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում օրենսդրորեն սահմանվում է Տուրքի հստակ դրույքաչափ՝ կախված հայցագնի արժեքից, որն էլ հետագայում բազմապատկվում է հատուկ գործակցով՝ կախված գործի բնույթից, որը ընդհանուր իրավասության դատարանում գործն ըստ էության քննելու դեպքում կազմում է 3[17]: Այսպիսով, մինչև 300 եվրո հայցագնի դեպքում, տուրքի արժեքը կկազմի 25 եվրո x 3՝ 75 եվրո: Գերմանիայում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմում է 220 եվրո[18]: Այսպիսով, Գերմանիայում Տուրքի նվազագույն դրույքաչափը (75 եվրո) կազմում է նվազագույն սպառողական զամբյուղի (220 եվրո) 34%-ը:

- Ուկրաինայում Տուրքը հաշվարկվում է «կենսաապահովման աշխատավարձ»-ի (прожиточный минимум/living wage) հիման վրա: Ընդ որում՝ Տուրքի չափը

---

[13] Налоговый кодекс РФ, статья 333.19

[14] https://www.dw.com/ru/%D0%BF%D0%BE%D1%82%D1%80%D0%B5%D0%B1%D0%B8%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F-%D0%BA%D0%BE%D1%80%D0%B7%D0%B8%D0%BD%D0%B0-2020-%D0%B8%D0%BB%D0%B8-%D0%BA%D0%B0%D0%BA-%D1%81%D0%B2%D0%B5%D1%81%D1%82%D0%B8-%D0%BA%D0%BE%D0%BD%D1%86%D1%8B-%D1%81-%D0%BA%D0%BE%D0%BD%D1%86%D0%B0%D0%BC%D0%B8-%D0%B2-%D1%80%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8/a-51835266

[15] State Fees Act, Annex 1

[16] http://ec.europa.eu/social/BlobServlet?docId=14578&langId=en, էջ՝ 1

[17] Study on the Transparency of Costs of Civil Judicial Proceedings in the European Union, COUNTRY REPORT, GERMANY, Submitted by Michael Bonsau Country Expert, DECEMBER 30, 2007, էջեր՝ 19-21

[18] http://ec.europa.eu/social/BlobServlet?docId=14575&langId=en, էջ՝ 1

տարբեր է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Այսպես, ֆիզիկական անձանց դեպքում այն կազմում է հայցագնի 1%-ը, բայց ոչ պակաս 0.4 կենսաապահովման աշխատավարձից և ոչ ավելի 5 կենսաապահովման աշխատավարձից, իսկ իրավաբանական անձանց համար՝ հայցագնի 1.5%-ը, բայց որ պակաս 1 կենսաապահովման աշխատավարձից և ոչ ավելի 350 կենսաապահովման աշխատավարձից: Ընդ որում՝ 1 կենսաապահովման աշխատավարձը հավասար է 1921 (շուրջ 34,616 դրամ) ուկրաինական գրվնա: Այսինքն, Տուրքի նվազագույն չափը կազմում է մոտավորապես 13,846 դրամ[19]:

- Ղազախստանում նույնպես Տուրքը հաշվարկվում է կենսաապահովման աշխատավարձի հիման վրա՝ տարբերակելով դրա չափերը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Այստեղ ֆիզիկական անձանցից գանձվող Տուրքը հավասար է հայցագնի 1%-ին, իսկ իրավաբանական անձանց համար՝ 3%-ին, սակայն Տուրքի նվազագույն չափ սահմանված չէ[20]:

- Վրաստանում Տուրքի չափը սահմանվում է հայցագնի 3%-ի չափով բայց ոչ պակաս քան 100 վրացական լարին, որը հավասար է շուրջ 15,619 դրամի: Ընդ որում՝ Տուրքի առավելագույն չափի դեպքում տարբերակում է մտցվում ֆիզիկական և իրավաբանական անձանց համար. մասնավորապես, առաջին ատյանում ֆիզիկական անձանց դեպքում՝ 3,000 լարի (468,570 դրամ), իրավաբանական անձանց դեպքում՝ 5,000 լարի (780,950դրամ), վերաքննիչ ատյանում՝ ֆիզիկական անձանց դեպքում՝ 5,000 լարի (780,950դրամ), իրավաբանական անձանց դեպքում՝ 7,000 լարի (1,093,330 դրամ), վճռաբեկ ատյանում՝ ֆիզիկական անձանց դեպքում՝ 6,000 լարի (937,140 դրամ), իրավաբանական անձանց դեպքում՝ 8,000 լարի (1,249,520 դրամ)[21]:

- Բելոռուսիայի Հանրապետությունում Տուրքի չափը հավասար է հայցագնի 5%-ին, սակայն այստեղ Տուրքի նվազագույն և առավելագույն չափերը նշված չեն[22]:

Այս տեսանկյունից ուշադրության են արժանի նաև «Արդարադատության արդյունավետության» եվրոպական հանձնաժողովի (CEPEJ, այսուհետ՝ ԱԱԵՀ) կողմից 2020թ.-ին կազմված «Եվրոպական դատական համակարգեր» գնահատման

[19] https://balance.ua/ru/news/post/stavki-sudebnogo-sbora-2019
[20] http://almaty.sud.kz/rus/content/gosudarstvennaya-poshlina
[21] https://matsne.gov.ge/ru/document/view/93718?publication=84
[22] http://samsebeyurist.by/spravochnaya-informatsiya/tarify/gosposhltigna-sud

հաշվետվությունում ներկայացված դատական բյուջետավորման վերաբերյալ տվյալները[23]:

Այսպես, օրինակ, ***մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով Հայաստանի հետ համեմատելի երկրներում (մինչև 10,000 եվրո ՀՆԱ) 2018թ.-ին դատարանների բյուջեն՝ ըստ մեկ բնակչի և ըստ մեկ շնչի ՀՆԱ-ի ունի հետևյալ պատկերը.***

- Հայաստան՝ շուրջ 5 եվրո (ըստ մեկ բնակչի) և շուրջ 0.15 % (ըստ մեկ շնչի ՀՆԱ-ի).
- Վրաստան՝ շուրջ 7 եվրո (ըստ մեկ բնակչի) և շուրջ 0.18 % (ըստ մեկ շնչի ՀՆԱ-ի).
- Ռուսաստան՝ շուրջ 21 եվրո (ըստ մեկ բնակչի) և շուրջ 0.22 % (ըստ մեկ շնչի ՀՆԱ-ի).
- Ուկրաինա՝ շուրջ 10 եվրո (ըստ մեկ բնակչի) և շուրջ 0.35 % (ըստ մեկ շնչի ՀՆԱ-ի):

Իր հերթին, 10,000-20,000 եվրո մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշ ունեցող երկրներից համեմատելի երկրներում պատկերը հետևյալն է.

- Չեխիա՝ շուրջ 41 եվրո (ըստ մեկ բնակչի) և շուրջ 0.24 % (ըստ մեկ շնչի ՀՆԱ-ի).
- էստոնիա՝ շուրջ 38 եվրո (ըստ մեկ բնակչի) և շուրջ 0.19 % (ըստ մեկ շնչի ՀՆԱ-ի):

Միևնույն ժամանակ, վերոնշյալ երկրներում 100,000 բնակչի հաշվով հասանելի դատարանների թիվը հետևյալն է.

- Հայաստան՝ շուրջ 1.6 դատարան.
- Վրաստան՝ շուրջ 1.7 դատարան.
- Ռուսաստան՝ շուրջ 7 դատարան.
- Ուկրաինա շուրջ 1.7 դատարան.
- Չեխիա՝ շուրջ 0.8 դատարան.
- էստոնիա՝ շուրջ 1.7 դատարան:

Այլ կերպ, կարող ենք նկատել, որ Հայաստանը ավելի քիչ բյուջեով ապահովում է գրեթե նույնությամբ հասանելի դատարաններ իր բնակչության համար:

[23] European Judicial Systems, CEPEJ Evaluation Report, 2020 Evaluation cycle (2018 data), Council of Europe, September 2020

Միևնույն ժամանակ նշենք, որ ուսումնասիրվող և համեմատելի այլ երկրներում դատական տուրքերը կազմում են դատական բյուջեի հետևյալ հատվածը.

- Հայաստան՝ 17 %.
- Վրաստան՝ 22 %.
- Ռուսաստան՝ 16 %.
- Ուկրաինա՝ 29 %.
- Բուլղարիա՝ 27 %.
- Սերբիա՝ 25 %.
- Մակեդոնիա՝ 36 %.
- Չեխիա՝ 9 %.
- էստոնիա՝ 40 %.
- Լեհաստան՝ 27 %.
- Լատվիա՝ 21 %.
- Լիտվա՝ 13 %:

Ինչպես նաև, 3,000 եվրո արժողությամբ պարտքի դատական կարգով բռնագանձման համար ուսումնասիրված երկրներում անհրաժեշտ է վճարել հետևյալ քանակությամբ դատական տուրք.

- Հայաստան՝ շուրջ 55 եվրո.
- Վրաստան՝ շուրջ 90 եվրո.
- Ռուսաստան՝ շուրջ 75 եվրո.
- Ուկրաինա՝ շուրջ 35 եվրո.
- Ուկրաինա՝ շուրջ 35 եվրո.
- Բուլղարիա՝ շուրջ 120 եվրո.
- Սերբիա՝ շուրջ 145 եվրո.
- Մակեդոնիա՝ շուրջ 55 եվրո.
- Չեխիա՝ շուրջ 150 եվրո.
- էստոնիա՝ շուրջ 275 եվրո.
- Լեհաստան՝ շուրջ 150 եվրո.
- Լատվիա՝ շուրջ 355 եվրո.
- Լիտվա՝ շուրջ 80 եվրո:

Պետական տուրքերի վերանայման տեսանկյունից հարկ է անդրադառնալ նաև Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) դիրքորոշումներին: Մասնավորապես, համաձայն Սահմանադրական դատարանի 10.07.2018թ.-ի թիվ ՍԴՈ-1423 որոշման՝ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականխել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը, և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը: Այսինքն, պետական տուրքի գանձումը միաժամանակ ապահովում է մի քանի իրավաչափ նպատակների իրականացում՝ կատարելով և՛ փոխհատուցող, և՛ կանխարգելող գործառույթներ: Պետական տուրք սահմանելիս օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ: Ընդ որում՝ որպես նշված հավասարակշռության ապահովման երաշխիք դիտարկվել են պետական տուրքի վճարման նկատմամբ կիրառվող արտոնությունները (տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 25.05.2010թ.-ի թիվ ՍԴՈ-890, 10.07.2018թ.-ի թիվ ՍԴՈ-1423 որոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 13.07.1995թ.-ի Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործը, Վճռաբեկ դատարանի՝ 30.11.2018թ.-ի թիվ ՎԴ/1115/05/16 որոշումը և այլն):

Ուստի, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակի ապահովումը կարող է պայմանավորվել այն հանգամանքով, որ առավել լիարժեք կապահովվի պետական տուրքի կանխարգելող գործառույթը՝ բացառելով անհիմն հայցադիմումներով և դիմումներով դատարանների ծանրաբեռնումը, միաժամանակ, բարձրացնելով նաև պետական տուրքի փոխհատուցող գործառույթի

արդյունավետությունը, քանի որ պեական տուրքի վճարումից ձևավորվող միջոցների հաշվին հնարավոր կլինի բարելավել դատարանների նյութատեխնիկական ապահովվածությունը, ավելացնել դատավորների և նրան կցված ծառայողների թվաքանակը, բարելավել նրանց սոցիալական մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ վարձատրությունը, խթանել նոր կադրերի ներգրավումը դատական համակարգ, որոնք բխում են նաև Կառավարության՝ 2019թ.-ի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշմամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանված ռազմավարական նպատակներից:

Իր հերթին, ըստ ՄԻԵԴ-ի, դատարանի իրավունքն ինքնին պետության կողմից կարգավորում պահանջող երևույթ է (mutatis mutandis Աիրեյն ընդդեմ Իռլանդիայի գործով, գանգատ թիվ 6289/73, 1979 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռ, պարբ. 26): Ընդ որում, ՄԻԵԴ-ը գտել է, որ դատարաններին հայցեր ներկայացնելու համար տուրքեր վճարելու պահանջը չի կարող դիտվել որպես դատարան դիմելու իրավունքի սահմանափակում, որը per se անհամատեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ (Կրեուզն ընդդեմ Լեհաստանի, գանգատ թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19-ի վճիռ, կետ 53-56, 60): Մեկ այլ վճռով ՄԻԵԴ-ի տեսանկյունից, երբ դատարան վճարվող պետական տուրքը կազմել է նվազագույն ամսական աշխատավարձի մեկ քառորդը, այն այդքան էլ բարձր չի թվացել (տես Զուլինն ընդդեմ էստոնիայի գործով, գանգատ թիվ 16563/08, 40841/08, 8192/10 և18656/10, 2012 թվականի մայիսի 29-ի վճիռ, կետ 160-165): Այս տեսանկյունից նշենք, որ նախատեսվող փոփոխությունների արդյունքում նշված թիվը կազմելու է նվազագույն աշխատավարձի շուրջ մեկ տասներորդը:

1.2. Վարչական գործերի համար վճարվող Տուրքի դրույքաչափերը

Ներկայումս վարչական արդարադատության իրականացման համար գանձվող Տուրքի նկատմամբ բոլոր դեպքերում սահմանված է միատեսակ մոտեցում, երբ յուրաքանչյուր դեպքում վարչական ակտերի դատական կարգով բողոքարկման համար գանձվում է նույն չափով Տուրք: Նշված տարբերակման բացակայությունը, հատկապես, ակներև է դառնում այնպիսի վարչական ակտերի վիճարկման

ժամանակ, որոնցով սահմանված է դրամական արտահայտությամբ պատասխանատվության միջոց (տուգանք, տույժ). օրինակ՝ նույնաչափ տուրք է գանձվում և՛ 10,000 դրամի չափով պատասխանատվություն սահմանող վարչական ակտի վիճարկման դեպում, և՛՝ 10,000,000 դրամ: Նման իրավիճակներից խուսափելու համար առավել ընդունված մոտեցումներից է տուրքի հաշվարկման բանաձևային եղանակների սահմանումը, օրինակ, վարչական պատասխանատվության դրամական արտահայտության որոշակի տոկոսի չափով կամ վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ պայմանավորված աղյուսակային սահմանաչափերի սահմանումը: Ընդ որում, նկատենք, որ նման մոտեցումները նորություն չեն վարչական դատավարություն ունեցող տարբեր երկրների համար, այսպես՝

- Գերմանիայի օրենսդիրը յուրահատուկ մոտեցում է դրսևորել վարչական արդարադատության իրականացման համար Տուրքի դրույքաչափերի գանձման վերաբերյալ: Մասնավորապես, «Դատական տուրքերի մասին» Գերմանիայի օերնքի[24] 3-րդ հոդվածով որպես, ընդհանուր սկզբունք սահմանում է, որ տուրքի չափը պայմանավորված է վեճի առարկայի արժեքով, իսկ դրույքաչափերը սահմանվում են օրենքի Հավելված 1-ով սահմանված սանդղակներին համապատասխան: Իր հերթին, այս առումով նշված օրենքի շրջանակներում տարբերակվում են վարչական արդարադատության երկու հիմնական վարույթներ՝ Վարչական իրավախախտումների մասին օրենքով սահմանված վարույթը և Վարչական իրավասության դատարանների վարույթը, որոնց շրջանակներում տարբերակված են նաև Տուրքի դրույքաչափերը:

  Այսպես, Վարչական իրավախախտումների մասին օրենքով սահմանված վարույթի շրջանակներում գանձվում է Տուրք նշանակված տուգանքի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 եվրոն և ոչ ավել քան 15,000 եվրոն, եթե հատուկ այլ բան նախատեսված չէ[25]: Իր հերթին, այս նույն վարույթի շրջանակներում կարգավորվում են բռնագանձման, հատուկ տուրքերի, այլ բողոքների և լսված չլինելու մասին բողոքների վերաբերյալ գործերը, որոնց

[24] Gerichtskostengesetz (GKG), տե՛ս https://www.gesetze-im-internet.de/gkg_2004/BJNR071810004.html
[25] Տե՛ս նշված օրենքի Հավելված 1, 4-րդ մաս, հիմնական բաժին 1, բաժին 1

դեպքում արդեն սահմանվում է ֆիքսված Տուրք[26]: Ավելի բարդեցված հաշվարկային բանաձև է սահմանված Վարչական իրավասության դատարանների վարույթի համար, որոնց հաշվարկման աղյուսակը՝ կախված վեճի արժեքից: Այսպես, մինչև 500 եվրո վեճի համար տուրքը կազմում է 35 եվրո, այնուհետև, մինչև 2,000 եվրո վեճի դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ 500 եվրոի դիմաց գանձվում է 18 եվրո, մինչև 10,000 եվրո վեճի դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ 1,000 եվրոի դիմաց գանձվում է 19 եվրո, մինչև 25,000 եվրո վեճի դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ 3,000 եվրոի դիմաց գանձվում է 26 եվրո, մինչև 50,000 եվրո վեճի դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ 5,000 եվրոի դիմաց գանձվում է 35 եվրո, մինչև 200,000 եվրո վեճի դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ 15,000 եվրոի դիմաց գանձվում է 120 եվրո, մինչև 500,000 եվրո վեճի դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ 30,000 եվրոի դիմաց գանձվում է 179 եվրո, իսկ 500,000 եվրոն գերազանցող վեճի դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ 50,000 եվրոյի դիմաց գանձվում է 180 եվրո[27]: Իր հերթին, Վարչական իրավասության դատարանների վարույթի համար վերոնշյալ հիմքով հաշվարկված արժեքը բազմապատկվում է 3, 4, 5 անգամ կամ այլ գործակցով՝ կախված տարբեր հանգամանքներից և դատական ատյաններից[28]:

- Հաշվարկային բանաձևի որոշակի տարրեր առկա են նաև Էստոնիայում, որտեղ, մասնավորապես հարկային մարմնի կողմից կայացված վարչական իրավախախտման մասին վարչական ակտերի դատական բողոքարկման դեպքում գանձվում է Տուրք՝ ակտով սահմանված տուգանքի 3 տոկոսի չափով[29]: Սակայն, մնացած դեպքերում Էստոնիայում գործում է Տուրքի ֆիքսված արժեք[30]:
- Վրաստանում ևս վարչական արդարադատության իրականացման համար սահմանված տուրքի արժեքը որոշվում է հաշվարկայաին բանաձևով, այն է՝

[26] Տե՛ս նույն տեղում, բաժիններ 2-5
[27] Տե՛ս նշված օրենքի հոդված 34
[28] Տե՛ս նշված օրենքի Հավելված 1, 5-րդ մաս
[29] State Fees Act, Article 60(4)
[30] Տե՛ս Fees Act, Article 60

վեճի առարկայի արժեքի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան 100 վրացական լարին[31]:

- Ուկրաինայում, իր հերթին, վարչական արդարադատության համար գանձվող տուրքի տեսակետից տարբերակված են գույքային բնույթի և ոչ գույքային բնույթի հայցերը, իսկ գույքային բնույթի հայցերի դեպքում կիրառվում է Տուրքի հաշվարկային բանաձև՝ հայցագնի 1.5 տոկոսի չափով իրավաբանական անձանց համար, բայց ոչ պակաս, քան 2,102 ուկրաինական գրիվնան և ոչ ավել, քան 21,020 գրիվնան, ինչպես նաև՝ հայցագնի 1 տոկոսի չափով ֆիզիկական անձանց համար, բայց ոչ պակաս, քան 840.80 գրիվնան և ոչ ավել, քան 10,510 գրիվնան[32]:

Նշված հանգամանքով պայմանավորված, առավել նպատակահարմար է որոշ դեպքերում վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար Տուրքի հաշվարկման բանաձևային եղանակ՝ հիմնվելով վարչական ակտով սահմանված վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեքի վրա: Ընդ որում, առաջարկվում է սահմանել վճարման ենթակա պետական տուրքի հաշվարկի այնպիսի բանաձև, որի դեպքում վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեքով պայմանավորված կսահմանվի բազային տուրքի որոշակի բազմապատիկին համարժեք գումար, որին կգումարվի նաև կոնկրետ վարչական ակտով կիրառման ենթակա վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեքի և Օրենքով սահմանված վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեքի համապատասխան չափի տարբերության որոշակի տոկոսը: Օրինակ՝ եթե սահմանվում է, որ 100,000 դրամից մինչև 1,000,000 դրամը ներառյալ դրամական արտահայտությամբ վարչական պատասխանատվության միջոց նախատեսող վարչական ակտերի վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքը կազմում է բազային տուրքի 5-ապատիկին գումարած 100,000 հազար դրամը գերազանցող մասի 0.5 տոկոսի չափով գումար, ապա կոնկրետ վարչական ակտով, օրինակ, 500,000 դրամ վարչական պատասխանատվություն նախատեսված լինելու

[31] Տե՛ս «Պետական տուրքի մասին» Վրաստանի օրենք, հոդված 4, https://matsne.gov.ge/ru/document/view/93718?publication=84
[32] https://biz.ligazakon.net/ru/news/191328_stavki-sudebnogo-sbora-vyrastut-s-1-yanvarya-2020-goda

դեպքում, դրա վիճարկման համար անհրաժեշտ պետական տուրքը կկազմի 12,000 դրամ (առավել մանրամասն տե՛ս ստորև բերված օրինակում):

Քայլ 1.

500,000	**-**	**100,000**	**=**	**400,000**
(կոնկրետ վարչական ակտով կիրառման ենթակա վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեք)		*(Օրենքով սահմանված վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեքի համապատասխան չափ)*		

Քայլ 2.

$$\frac{400{,}000 \times 0.5}{100} = 2{,}000$$

Քայլ 3.

2,000 + 10,000 = 12,000

1.3. Տուրքի առավելագույն չափը

Ներկայումս Օրենքով սահմանված չեն Տուրքի առավելագույն չափերը առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և վերաքննիչ դատարանում, ինչը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ քննվում են մեծ դրամական պահանջի գործեր, որի դեպքում հայցվորից գանձվող Տուրքի արժեքը կարող է անհամաչափ մեծ լինել: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում սահմանել նաև Տուրքի առավելագույն չափերը: Ընդ որում՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներ սահմանում են Տուրքի առավելագույն չափը: Օրինակ՝ Չեխիայում այդ արժեքը հավասար է շուրջ 36,000 եվրոյի[33], ինչը գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը 280 անգամ, Էստոնիայում՝ 47,900 եվրո[34], ինչը գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը 332 անգամ, Լեհաստանում՝ 50,000 եվրո[35], ինչը գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը (148 եվրո[36]) 337 անգամ, Գերմանիայում՝ 270,000 եվրո[37], ինչը

[33] Տե՛ս հղում 9

[34] Study on the Transparency of Costs of Civil Judicial Proceedings in the European Union, COUNTRY REPORT, ESTONIA, Submitted by Anu Sander Country Expert, DECEMBER 30, 2007, էջ՝ 27

[35] https://www.lexology.com/library/detail.aspx?g=44bb22c6-37c3-4dfc-bcfa-94aa2885687f

[36] http://ec.europa.eu/social/BlobServlet?docId=15027&langId=en, էջ՝ 1

գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը 1,227 անգամ, իսկ Սլովենիայում՝ 20,000 եվրո[38], ինչը գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը (231 եվրո[39]) մոտավորապես 86.6 անգամ:

1.4. Տուրքը սնանկության վարույթում

Ներկայումս առկա է անհամապատասխանություն սնանկության դիմումների համար վճարվող տուրքերի և, օրինակ, դրամական պահանջնով բռնագանձման համար վճարվող տուրքերի չափերի միջև, ինչի արդյունքում սնանկության վարույթը դիտվում է որպես մատչելի բռնագանձման վարույթ և կարող է չծառայել իր նպատակին, եթե պարտատիրոջ պահանջի չափը մեծ է, քանի որ եթե սնանկության դեպքում վճարվելու է ֆիքսված գումար՝ 500,000 դրամի չափով, ապա բռնագանձման պահանջի դեպքում այդ գումարը կարող է շատ ավելի մեծ լինել՝ կախված հայցագնի չափից: Ուստի, անհրաժեշտ է վերանայել նաև սնանկության դիմումների համար վճարվող Տուրքի դրույքաչափերը: Նշվածը հիմնված է նաև Համաշխարհային բանկի փորձագետների հետ քննարկումների վրա, ըստ որոնց, սնանկության գործընթացների համար պետական տուրքի չափը պետք է սահմանել՝ հաշվի առնելով մի կողմից՝ արդյո՞ք պարտապանի դեմ դիմումների ներկայացման ընթակարգը պարզ է, մյուս կողմից՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ներկայացվող դեպքերը: Ներկայացնելով Լեհաստանի օրինակը, որտեղ ցածր պետական տուրքեր նախատեսված լինելու պայմաններում սնանկության վարույթը վերածվել էր միայն պարտապաններին ճնշելու միջոցի և մեխանիզմի, Համաշխարհային բանկի ներկայացուցիչները նշել են, որ առաջին հայացքից Հայաստանում ևս կարող է ծագել նույն խնդիրը, քանի որ ներկայումս ՀՀ-ում նախատեսված է պետական տուրքի ցածր չափ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունները վկայում են, որ հիմնականում Տուրքը սնանկության վարույթի համար սահմանված է կայուն դրամական գումարով, սակայն տարբերակված մոտեցում է դրսևորվում ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Օրինակ՝

---

[37] Տե՛ս հղում 15

[38] https://e-justice.europa.eu/content_costs_of_proceedings-37-en.do

[39] http://ec.europa.eu/social/BlobServlet?docId=15029&langId=en, էջ՝ 1

- ՌԴ-ում ֆիզիկական անձանց համար նախատեսված է 300 ռուբլի, իսկ իրավաբանական անձանց համար՝ 6,000 ռուբլի:

- Միացյալ Թագավորությունում՝ Անգլիայում և Վելսում՝ դիմումի համար 130 ֆունտ ստեռլինգ և սնանկության դեպոզիտ 550 ֆունտ ստեռլինգ, իսկ Հյուսիսային Իռլանդիայում՝ դատարանի վճար՝ 144 ֆունտ ստեռլինգ, սնանկության դեպոզիտ՝ 525 ֆունտ ստեռլինգ:

- Միացյալ Նահանգների նահանգների մեծ մասում, օրինակ՝ Նևադա նահանգում՝ 335 դոլար, եթե ներկայացվում է յոթերորդ կետով սահմանված կարգով, և 1,717 դոլար՝ եթե ներկայացվում է տասնմեկերորդ կետով սահմանված կարգով:

- Լատվիայում՝ 355.72 եվրո իրավաբանական անձանց համար և 71.14 եվրո ֆիզիկական անձանց համար:

Ավելին, ներկայումս Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել է նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը[40], որով առաջարկվում է պարտապանի անվճարունակության հատկանիշներից պարտավորության չափի նվազագույն շեմը բարձրացնել՝ դարձնելով նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, ինչը ևս հիմնավորում է սնանկության դիմումներով Տուրքի բարձրացման անհրաժեշտությունը: Սա կարող է նաև դրական ազդեցություն ունենալ կորոնավիրուսի հետևանքով առաջացած տնտեսական խնդիրների արդյունքում անվճարունակ անձանց սնանկ ճանաչելու գործընթացները հնարավորինս կանխելու առումով:

1.5. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը նպաստելը

Ներկայումս արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումների համար պետական տուրք գանձելիս ցուցաբերվում է միանման մոտեցում: Սակայն հարկ է նշել, որ նշված դեպքերում միանման մոտեցման ցուցաբերումը, ըստ էության, չի նպաստում

[40] Պ-583-20.04.2020,25.05.2020-ՏՀ-011/1, http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=58147

վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը և դրանց գրավչության բարձրացմանը Հայաստանում: Իր հերթին, Ռազմավարությամբ որպես ռազմավարական նպատակ սահմանված է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը:

Նշվածի համատեքստում նկատենք, որ, օրինակ, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վարույթը արբիտրաժին օժանդակող վարույթ է, որի դեպքում դատարանը, գործի ըստ էության քննությանն առնչվող հարցերի չի անդրադառնում. օրինակ՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելը, արբիտրի նշանակումը, նրան բացարկ հայտնելը, նրա լիազորությունները դադարեցնելը, արբիտրաժի իրավասության վերաբերյալ որոշումը կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը: Միևնույն ժամանակ, արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար դատարան դիմելիս պետական տուրքից ազատելը կարող է բարձրացնել վեճերի լուծման տվյալ այլընտրանքային եղանակի գրավչությունը:

Իր հերթին, նշվածի լույսի ներքո անհրաժեշտ է անդրադառնալ նաև ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումների համար գանձվող պետական տուրքի գծով կարգավորումներին: Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ ի տարբերություն արբիտրաժի՝ ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը Հայաստանում, ըստ էության, կարելի է համարել կայացած: Ուստի, այդ ինստիտուտը լրացուցիչ, կողմնակի խթանների կարիք այդքան էլ չունի: Ավելին, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներ ներկայացնում են ֆինանսական համակարգի հաշտարարի շահառուները, որոնց պահանջները ֆինանսական համակարգի հաշտարարը քննում է անվճար, ուստի, նպատակահարմար է, որ այդպիսի քննության արդյունքում կայացվող որոշումների հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու համար դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը նույնպես առավել մատչելի լինի:

1.6. Տուրքի գծով արտոնությունները

Վերանայման կարիք ունի նաև Տուրքի գծով արտոնությունների համակարգը, հատկապես, Տուրք վճարելուց ազատելու դեպքերը:

- Մինչ օրս ալիմենտի չափը ավելացնելու վերաբերյալ հայցերով Տուրք գանձելու դեպքերում, երբ խնդիր է առաջանում Տուրքը գանձելու կամ չգանձելու վերաբերյալ, դատարանները առաջնորդվում են Դատարանների նախագահների խորհրդի՝ 29.01.2003թ. թիվ 129 որոշմամբ: Հետևաբար անհրաժեշտ է օրենսդրական կարգավորման դաշտ բերել նաև տվյալ դեպքերը:
- Ներկայումս դատական պրակտիկայում տարակարծիք մեկնաբանություններ են հնչում կապված վարչական դատավարությունում հատուկ վարույթի գործերի դիմաց գանձվող Տուրքի վերաբերյալ: Հետևաբար, անհրաժեշտ է հստակ սահմանել նաև այս դեպքերը՝ ըստ անհրաժեշտության որոշ վարույթների դեպքում սահմանելով արտոնություններ:
- Ներկայումս վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից ընդունվածների, գործում է Տուրքի վճարման արտոնություն: Այնինչ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են նաև այլ դեպքեր, երբ լիազոր մարմինը ենթարկում է վարչական պատասխանատվության: Տվյալ դեպքում նշված արտոնությունը հիմնավորված և արդարացի չէ, քանի որ նման արտոնություններ սահմանելով պետությունը նպատակ է հետապնդում ստեղծել սոցիալական երաշխիքներ իր քաղաքացիների համար, որոնք ելնելով իրենց սոցիալական դրությունից որոշակի դեպքերում կարող են դժվարություններ ունենալ՝ կապված Տուրքի վճարման հետ: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ անձինք կատարում են վարչական իրավախախտում, ենթարկվում պատասխանատվության և վիճարկում վարչական ակտը՝ առանց Տուրք վճարելու, այնինչ դատարանը կատարում է նույնածավալ աշխատանք: Տվյալ իրողությունն անմիջականորեն հանգեցնում է նաև վարչական դատարանի անհիմն ծանրաբեռնվածությանը Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել նաև այս դեպքերը՝ հիմքում ունենալով այդպիսի արտոնության սոցիալական արդարությունից բխող պահանջը և

նախատեսելով այն դեպքերը, երբ արտոնությունը պայմանավորված կլինի քաղաքացիների սոցիալական կարիքներով: Ընդ որում, այս անհրաժեշտությունը սահմանված է նաև Ռազմավարությամբ:

- Ներկայումս անձինք ազատված են նաև հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով Տուրքի վճարումից: Հարկ է նկատել, որ ներկայումս, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական ակտը այն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսում չբողոքարկելու դեպքում դառնում է անբողոքարկելի, անձինք չարաշահելով գործող արտոնությունը դատական կարգով բողոքարկում են հարկադիր կատարողների գործողությունները: Ուստի, հիմք ընդունելով նաև Ռազմավարությամբ սահմանված նպատակները, հարկ է վերանայել նաև տվյալ դեպքերը՝ կրկին հիմքում ունենալով այդպիսի արտոնության սոցիալական արդարությունից բխող պահանջը:
- Վերանայման կարիք ունի վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով Տուրք սահմանելու խնդիրը: Մանսավորապես, ներկայումս Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետով այդ դեպքերը սահմանված են որպես արտոնություն: Սակայն, հիմք ընդունելով վճարման կարգադրությունների քանակը և վարույթի իրականացման նպատակով դատարանի կողմից կատարվող աշխատանքի ծավալը, անհրաժեշտ է նախատեսել նաև Տուրքի դրույքաչափ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումներ դատարան ներկայացնելու դեպքերի համար: Նման մոտեցումն առկա է նաև մի շարք այլ երկրներում. օրինակ՝ Էստոնիայում այն կազմում է վիճարկվող գումարի 3 տոկոսը, բայց ոչ պակաս քան 45 եվրոն[41], Չեխիայում՝ 4 տոկոսը[42], Լեհաստանում՝ հիմնական դրույքաչափի (5%) շուրջ ¼-ը[43]: Ավելին, նման մոտեցումը բխում է նաև Համաշխարհային բանկի փորձագետների հետ անցկացված քննարկումների արդյունքներից և հիմնավորվում նրանց ներկայացրած օրինակներով:

[41] State Fees Act, §59(6)

[42] https://www.eulerhermes.com/content/dam/onemarketing/ehndbx/eulerhermes_com/en_gl/erd/collection/Czech_Rep.pdf

[43] https://cgolegal.com/services/litigation-department/payment-order-proceedings-and-writ-of-payment-proceedings/

- Ներկայումս դիտորդական կազմակերպությունները ազատված չեն պետական տուրքի վճարումից՝ ընտրությունների հետ անմիջականորեն կապված զանցանքների կատարման համար վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով: Միևնույն ժամանակ, այս գործերով դիտորդական կազմակերպությանը դատարան դիմելու իրավունքի վերապահումը օրենսդրի կողմից հետապնդում է ընտրությունների օրինականության նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման նպատակ: Այլ կերպ, նշված գործերով հայցադիմումներ ներկայացնելով, դիտորդական կազմակերպությունը որևէ մասնավոր շահ չի հետապնդում, փոխարենը հետապնդում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության պահանջների կատարման ապահովման, ընտրությունների անցկացման օրինականության ապահովմանը նպաստելու նպատակ: Հետևաբար, նպատակահարմար է նշված դեպքերի համար Տուրքի գծով արտոնություն սահմանել նաև դիտորդական կազմակերպությունների համար՝ խթանելով վերոնշյալ նպատակների արդյունավետ իրականացումը:
- Տուրքի գծով արտոնությունների գործող համակարգում նախատեսված չեն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով դատարան դիմելու դեպքերը: Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նման որոշման համար դատարան դիմում են ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը: Ուստի, հիմք ընդունելով նշված հարաբերություններում դատարան դիմող սուբյեկտների կարգավիճակը և նրանց համար առավել գործուն երաշխիքներ նախատեսելու անհրաժեշտությունը, նպատակահարմար է վերոնշյալ դեպքերի համար նույնպես սահմանել Տուրքի գծով արտոնություն:
- Ներկայումս օրենսդրորեն հստակ կարգավորված չէ այն հարցը, թե միջանկյալ դատական ակտերի դեմ բողոքների դեպքում Տուրք գանձվում է, թե՝ ոչ: Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել նաև նշված խնդիրը:

<u>1.7. Տուրքի վերադարձման դեպքերը.</u>

Վերանայման կարիք ունի նաև Տուրքի վերադարձի հիմքերի գործող համակարգը:

Մասնավորապես, Դատական պրակտիկայում շարունակում են խնդրահարույց մնալ այն դեպքերը, երբ Օրենքի ուժով պետական տուրքից ազատված գործերով պատասխանողը բողոքարկման կապակցությամբ վճարում է պետական տուրք և հայցը մերժվում է, իսկ հայցվոր ի սկզբանե պետական տուրքից ազատված լինելու արտոնության ուժով ազատվում է նաև պատասխանողի կողմից վճարված տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունից: Ուշագրավ է Սահմանադրական դատարանի՝ 10.07.2018թ. թիվ ՍԴՈ-1423 որոշումը, որտեղ ամրագրված է.*«Այն դեպքերում, երբ դատաքննության անբարենպաստ ելքով կամ օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով պայմանավորված դատավարության մասնակից այն սուբյեկտը, որն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերն Օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը»:* Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ պետական տուրքի բաշխումը հնարավոր չէ իրականացնել կողմերի միջև: Հետևաբար, նշված խնդրի լուծման համար անհրաժեշտ է լրացուցիչ հիմք նախաատեսել պետական տուրքի վերադարձի համար:

Միևնույն ժամանակ, խնդրահարույց է նաև վճռաբեկ դատարանի կողմից բողոքը առանց քննության թողնելու դեպքում պետական տուրքը չվերադարձվելու հարցը: Այսպես, ներկայումս «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ (...) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձվելու կամ դրանց ընդունումը մերժվելու դեպքում: Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կողմից վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվելու կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ

դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվելու դեպքում պետական տուրքը, բայց ոչ ավելի, քան քսան հազար Հայաստանի Հանրապետության դրամ, չի վերադարձվում: Այս տեսնկյունից, բողոքը առանց քննության թողնելու դեպքում Տուրքի վերադարձի հիմք չնախատեսելը անարդար է թվում, հատկապես, հաշվի առնելով, որ բողոքը վարույթ ընդունելը մերժելու դեպքում վճռաբեկ դատարանը բավականին խորությամբ քննում է բողոքը, իսկ առանց քննության թողնելու դեպքում, նման մոտեցում առկա չէ:

Հարկ է նաև նշել, որ դատական ծախսերն առավել նվազ են պարզեցված այլ ընթացակարգերի, այդ թվում՝ պարզեցված վարույթի համար: Հետևաբար, այս վարույթների համար կարծում ենք անհրաժեշտ է սահմանել տարբերակված մոտեցում: Ընդ որում, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ հայցադիմումն ընդունվում է ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում, սակայն հետագայում քննվում է պարզեցված վարույթի կարգով, և հակառակը՝ մի շարք հանգամանքների առկայության դեպքում դատարանը հայցադիմումը վարույթ է ընդունում պարզեցված վարույթի կարգով քննելու համար, սակայն օրենքով սահմանված հանգամանքներն ի հայտ գալուց հետո որոշում է կայացնում գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով քննելու մասին: Ուստի, առավել արդարացի կլինի սահմանել պետական տուրքի համապատասխանաբար մասնակի վերադարձի կամ ավել վճարման հնարավորություն և ընթացակարգ նման դեպքերի համար:

Իր հերթին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ հայցադիմումն ընդունվում է ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում, սակայն հետագայում քննվում է պարզեցված վարույթի կարգով, և հակառակը՝ մի շարք հանգամանքների առկայության դեպքում դատարանը հայցադիմումը վարույթ է ընդունում պարզեցված վարույթի կարգով քննելու համար, սակայն օրենքով սահմանված հանգամանքներն ի հայտ գալուց որոշում է կայացնում գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով քննելու մասին: Հաշվի առնելով վերը նշված դեպքերը՝ անհրաժեշտ է սահմանել նաև Տուրքի վերադարձման հիմք, ընդհանուր հայցային վարույթից պարզեցված վարույթի

անցնելու դեպքերի համար, և լրացուցիչ տուրք գանձելու հիմք՝ պարզեցված վարույթից ընդհանուր հայցային վարույթին անցում կատարելու դեպքերի համար:

Միաժամանակ, հիմք ընդունելով, որ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու համար նույնպես սահմանվում է Տուրքի դրույքաչափ, նպատակահարմար է նաև նախատեսել դրա վերադարձի դեպքեր, երբ դատարանը որոշում է կայացնում վճարման կարգադրությունը վերացնելու մասին այնպիսի դեպքերում, երբ դա պայմանավորված է ոչ թե դիմողի այլ պարտապանի գործողություններով:

1.8. Արտարժույթով ներկայացվող պահանջների հաշվարկը.

Ներկայումս Օրենքով առկա չէ հստակ կարգավորում, որը հնարավորություն կընձեռեր հաշվարկել վճարման ենթակա Տուրքը արտարժույթով պահանջ ներկայացվելու կամ պահանջի վիճարկման դեպքում: Նշված խնդիրը կարելի է հստակ նկատել նաև դատական պրակտիկայում: Այսպես, Քաղաքացիական վերաքննիչ դատարանը 20.20.2020թ.-ի թիվ ՏԴ/3226/02/19 որոշմամբ արձանագրել է, որ Կենտրոնական բանկի կողմից արժութային շուկայում ձևավորված դրամի միջին փոխարժեքը հրապարակվում է ամեն օր, ժամը 15:45-ին: Այլ կերպ ասած, որևէ օրը մինչև ժամը 15:45-ը Կենտրոնական բանկի կողմից սահմանած դրամի միջին փոխարժեքը համընկնում է նախորդ օրվա դրությամբ սահմանած դրամի փոխարժեքին: Ուստի, տվյալ գործում դատարանը Տուրքի հաշվարկը կատարելիս հիմնվել է «Հայփոստ» կայքից արտատպված տվյալների վրա, որոնց համաձայն՝ հայցադիմումը և կից փաստաթղթերը փոստային կապի ծառայությանը հանձնվել են ժամը 5:22-ին՝ կեսօրից հետո: Այլ կերպ ասած, վերաքննիչ դատարանը գտել է, որ փոստային կապի ծառայությանը հանձնելու պահին արդեն իսկ արժութային շուկայում ձևավորված դրամի միջին փոխարժեքը հրապարակված և հասանելի է եղել ավելի քան մեկ ժամ, ինչը բավարար էր բողոք բերող անձի համար համապատասխան հաշվարկները կատարելու և օրվա փոխարժեքին համապատասխան պետական տուրք մուծելու համար:

Մեկ այլ՝ 06.03.2020թ.-ի թիվ ՏԴ/3227/02/19 դատական գործի շրջանակներում Քաղաքացիական վերաքննիչ դատարանը գտել է, որ վերոգրյալ մեկնաբանության դեպքում, ըստ էության, դատարանը հայցվորին պարտադրում է հայցադիմում

պատրաստել ժամը 16:00-ից հետո՝ նույն օրը մուտքագրելով այն դատարան, ինչը խախտում է դատարանի մատչելիության սկզբունքը:

Այսպես, նկատում ենք խնդրո առարկա հարաբերություններում օրենսդրական կարգավորման սահմանման անհրաժեշտությունը: Ուստի, առաջարկում ենք, սահմանել, որ նման դեպքերում, Տուրքը հաշվարկվում է նախորդ օրացույցային օրը Կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Այսինքն, եթե հայցադիմումը ներկայացվում է, օրինակ, 05.04.2021թ.-ին, ապա Տուրքի հաշվարկի հիմքում պետք է ընդունվի 04.04.2021թ.-ին հրապարակված միջին փոխարժեքը: Ընդ որում, այս պարագայում կապ չունի, թե երբ է ներկայացվել հայցադիմումը՝ մինչև 15:45-ը, թե՞ 15:45-ից հետո, քանի որ անկախ հայցադիմումը ներկայացնելու ժամից կողմին հայտնի կլինի նախորդ օրվա համար սահմանված միջին փոխարժեքը՝ չխախտելով վերջինիս դատարանի մատչելիության իրավունքը և պարտադրելով հայցադիմումը ներկայացնել օրվա կոնկրետ ժամի: Նման կարգավորման պարագայում, ըստ էության, կբացառվեն դատական պրակտիկայում առկա տարակարծությունները, քանի որ անկախ հայցադիմումը ներկայացնելու ժամից հիմք կընդունվի նախորդ օրացույցային օրը հրապարակված փոխարժեքը:

1.9. Այլ օրենքներում կատարվող փոփոխությունները.

Պայմանավորված Օրենքում կատարված փոփոխություններով, անհրաժեշտ է կատարել փոփոխություններ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել կանոններ, որոնց միջոցով կապահովվի ընդհանուր հայցային վարույթի կարգով քննվող վարույթից պարզեցված վարույթի անցնելու կամ հակառակի դեպքում առաջացող քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորումը, կամ կանոներ, որոնք կկարգավորեն վճարման կարգադրություն արձակելու դիմում ներկայացնելու համար Տուրք գանձելու վերաբերյալ հարաբերությունները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Վերոնշյալ հիմնավորումները հաշվի առնելով և պայմանավորված Հայաստանում սոցիալ-տնտեսական ցուցանիշների, ինչպես նաև

արդարադատության իրականացման ծախսերի աճով՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է՝

1) Տուրքի գործող դրույքաչափերը ավելացնել միջինում մինչև 4 անգամ: Արդյունքում դրամական պահանջի դեպքում Տուրքի նվազագույն արժեքը կազմում է 6,000 դրամ, որն էլ իր հերթին կազմում է նվազագույն սպառողական զամբյուղի մոտավորապես 9.77 %-ը: Միաժամանակ, նույն սկզբունքով առաջարկվում է վերանայել նաև դրամական պահանջներով հայցադիմումների, դիմումների Տուրքի տոկոսադրույքները, ինչպես նաև Տուրքի գանձման այլ դեպքերը:

2) Վարչական գործերի համար սահմանել Տուրքի հաշվարկման բանաձևային եղանակ՝ հիմնվելով վարչական ակտով սահմանված վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեքի վրա:

3) Տուրքի առավելագույն շեմ սահմանել նվազագույն սպառողական զամբյուղի մոտավորապես 407-ապատիկը՝ 25,000,000 դրամ՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, հաշվարկման հիմքում դնելով ուսումնասիրված երկրների Տուրքի առավելագույն չափերի և նվազագույն սպառողական զամբյուղների հարաբերակցությունը: Ինչպես նաև, նշվածի հիման վրա առաջարկվում է սահմանել Տուրքի առավելագույն չափերը վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 15,000,000 դրամ, և վճռաբեկ դատարանում քաղաքացիական գործերով՝ 10,000,000 դրամ:

4) Սահմանել Տուրքի առավելագույն և նվազագույն չափերը նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի համար:

5) Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու համար նախատեսել Տուրքի գծով արտոնություն, իսկ արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումների և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար դիմումների համար գանձվող Տուրքի համար սահմանել տարբերակված մոտեցում:

6) Տարանջատել քաղաքացիական, վարչական և սնանկության վարույթներով Տուրքի դրույքաչափերի վերաբերյալ կարգավորումները՝ դրանք նախատեսելով միևնույն հոդվածի առանձին մասերում:

7) Վերանայել Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների համար Տուրքի չափերը:

8) Փոփոխության ենթարկել նաև Տուրքի վճարումից արտոնություններ սահմանելու դեպքերը: Արդյունքում, առաջարկվում է վերանայել դրույթներ, որոնք ներկայումս գործնականում չեն կիրառվում, ինչպես օրինակ, տուգանքների զիջման կամ նվազեցման հետ կապված դեպքերը: Օրինակ՝ վարչական դատավարությունում հատուկ վարույթի գործերով առաջարկվում է արտոնություն սահմանել նաև հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ դիմումների և հասարակական կազմակերպության ներկայացրած հայցերի համար՝ շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված, ընդլայնել ալիմենտային հարաբերությունների վիճարկման դեպքում Տուրքի գծով արտոնության սահմանները, նախատեսել արտոնություն ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների համար դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմումների համար և այլն արտոնություններ: Միաժամանակ, առաջարկվում է վճարման կարգադրություններ արձակելու համար դիմումներ ներկայացնելու համար սահմանել Տուրք:

9) Կապված նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքում եզրափակիչ դատական ակտերի սպառիչ ցանկի ամրագրմամբ վերանայել դրանց հետ կապված արտոնությունների դեպքերը՝ նախատեսելով Տուրքի գանձում գործի վարույթը կարճելու և հայցը առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեպքում:

10) Նախատեսել Տուրքի վերադարձման լրացուցիչ դեպքեր, երբ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, մերժում է այն հայցը, որով հայցվորը ազատված է եղել պետական տուրքի վճարումից, վճռաբեկ դատարանը բողոքը թողնում է առանց քննության, դատարանը գործը ընդհանուր հայցային վարույթի կարգով վարույթ ընդունելուց հետո գործը քննում է պարզեցված վարույթի կարգով կամ առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում վճարման կարգադրությունը վերացնելու մասին՝ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու կամ վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության դեպքում:

11) Տուրքի վերանայման գծով այլ կարգավորումներ նախատեսել:

12) Նախատեսել, որ արտարժույթով պահանջ ներկայացվելու կամ պահանջի վիճարկման դեպքում պետական տուրքը կհաշվարկվի համապատասխանաբար հայցադիմումը կամ բողոքը ներկայացնելուն նախորդող օրացույցային օրը կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

13) Պայմանավորված Օրենքում կատարված փոփոխություններով, կատարել փոփոխություններ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերում:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է համապատասխանեցնել Տուրքի դրույքաչափերը ներկայումս հաստատված սոցիալ-տնտեսական ցուցանիշներին: Կատարվող փոփոխություններով և լրացումներով ակնկալվում է բարձրացնել արդարադատության արդյունավետությունը: Միևնույն ժամանակ որպես հստակ նպատակ հետապնդվում է դատարան դիմելու մատչելիության սկզբունքը չխախտելը: Նշված փոփոխությունները կապահովեն նաև Ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերով սահմանված դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը: Միևնույն ժամանակ նկատենք, որ 2019թ.-ի ընթացքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել գույքային իրավահարաբերությունների և ամուսնալության ընդհանուր 5,543 պահանջներ, գործարքների հետ կապված իրավահարաբերությունների 1,323 պահանջներ, 100,000 դրամը գերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ 108,543 պահանջներ, վճարման

կարգադրություններ արձակելու վերաբերյալ 94,418 դիմումներ[44], որի արդյունքում պետական բյուջե, ըստ կատարված հաշվարկների, պետք է վճարվեր 249,352,400 դրամ: Իր հերթին, նույն քանակի գործերի պահպանման դեպքում պետական տուրքի փոփոխված դրույքաչափերով պետական բյուջեի մուտքերը ակնկալվում է, որ կկազմեն 937,408,000 դրամ, այլ կերպ, տարբերությունը կկազմի 688,055,600 դրամ: Նկատենք նաև, որ սնանկության դատարան ներկայացված դիմումների հաշվարկով 2019թ.-ին գանձվել է 403,600,000 դրամ տուրք, իսկ նույն քանակի գործերի պահպանման դեպքում պետական տուրքի փոփոխված դրույքաչափերով պետական բյուջեի մուտքերը ակնկալվում է, որ կկազմեն 837,000,000 դրամ, այլ կերպ, տարբերությունը կկազմի 433,400,000 դրամ:

[44] Տե՛ս ԲԴԽ 2019 թվականի ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննության ընթացքի վերաբերյալ, http://court.am/hy/statistic-inner/184

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կ-832-29.12.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 9. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող՝ այդ թվում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացվող հայցադիմումների համար՝	
ա. դրամական պահանջով	հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 6-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 25 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
2) հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով

3) հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 15-ապատիկի չափով
4) արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու ~~, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ~~ դիմումների համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
5) օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 50-ապատիկի չափով
6) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումների համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
~~5~~7) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումների համար՝	բազային տուրքի 4-ապատիկի չափով
~~6~~8) գործը պարզեցված վարույթի կարգով քննության ենթակա լինելու կամ քննվելու դեպքում հայցադիմումների համար՝	
ա. դրամական պահանջով	հայցագնի 2 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 1.5-

	ապատիկից
բ. ոչ դրամական պահանջով	բազային տուրքի 10-ապատիկի չափով
~~7~~9) վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումների համար՝	բազային տուրքի 1.5-ապատիկի չափով
~~8~~10) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝	
ա. դրամական պահանջի գործերով	վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 4 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, ապա հայցագնի 4 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 15-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 15 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջի գործերով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
գ. միայն վճռի պատճառաբանական մասի դեմ բողոքներով	բազային տուրքի ~~30~~20-ապատիկի չափով
դ. գործին մասնակից չդարձած անձանց բողոքներով	բազային տուրքի ~~30~~20-ապատիկի չափով
ե. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացված	բազային տուրքի 30-ապատիկի չափով

դատական ակտերի դեմ բողոքներով	
զ. ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման ~~,~~ վերաբերյալ ~~օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ~~ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 15-ապատիկի չափով
է. օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 60-ապատիկի չափով
ը. օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
~~է~~թ. գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ժ. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման	բազային տուրքի 10-ապատիկի չափով

եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների դեմ բողոքներով	
~~ը~~ժա. վճարման կարգադրության դեմ վերաքննիչ բողոքներով	բազային տուրքի 3-ապատիկի չափով
~~9~~11) վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	
ա. դրամական պահանջի գործերով	վճռաբեկ բողոքում նշված վիճարկվող գումարի, 5 տոկոսի չափով, իսկ եթե վերաքննիչ դատարանում վիճարկվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, և վերաքննիչ դատարանը կայացրելը է բողոքն ամբողջությամբ բավարարելու կամ մերժելու մասին որոշում, ապա հայցագնի 5 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 30-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 10 000-ապատիկից
բ. ոչ դրամական պահանջի գործերով	բազային տուրքի 40-ապատիկի չափով
գ. միայն որոշման պատճառաբանական մասի դեմ բողոքներով	բազային տուրքի ~~40~~30-ապատիկի չափով
դ. գործին մասնակից չդարձած անձանց	բազային տուրքի ~~40~~30-ապատիկի

բողոքներով	չափով
ե. վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքներով	բազային տուրքի 40-ապատիկի չափով
զ. ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման ~~,~~ վերաբերյալ ~~օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ~~ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
է. օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 70-ապատիկի չափով
ը. օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 40-ապատիկի չափով
~~է~~թ. ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ	բազային տուրքի 20-ապատիկի չափով

մասնակիորեն գործի վարույթը կարճելու, ինչպես նաև ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով	
ժ. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար՝ բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի~~,~~	բազային տուրքի 10-ապատիկի չափով
2) այն վարչական ակտերի վիճարկման պահանջով հայցադիմումների համար, որոնցով կիրառվել է դրամական	

արտահայտությամբ վարչական պատասխանատվության միջոց հետևյալ չափերով՝	
ա. մինչև 10 հազար դրամը ներառյալ	բազային տուրքի 4-ապատիկի չափով
բ. 10 հազար դրամից մինչև 100 հազար դրամը ներառյալ	բազային տուրքի 5-ապատիկին գումարած 10 հազար դրամը գերազանցող ~~գումարի~~ մասի 1 տոկոսի չափով
գ. 100 հազար դրամից մինչև մեկ միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 10-ապատիկին գումարած 100 հազար դրամը գերազանցող ~~գումարի~~ մասի 0.5 տոկոսի չափով
դ. մեկ միլիոն դրամից մինչև հինգ միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի 15-ապատիկին գումարած մեկ միլիոն դրամը գերազանցող ~~գումարի~~ մասի 0.25 տոկոսի չափով
ե. հինգ միլիոն դրամից մինչև 10 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի ~~20~~25-ապատիկին գումարած հինգ միլիոն դրամը գերազանցող ~~գումարի~~ մասի 0.1 տոկոսի չափով
զ. 10 միլիոն դրամից մինչև 50 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի ~~25~~30-ապատիկին գումարած 10 միլիոն դրամը գերազանցող ~~գումարի~~ մասի 0.05 տոկոսի չափով
է. 50 միլիոն դրամից մինչև 100 միլիոն դրամը ներառյալ	բազային տուրքի ~~30~~50-ապատիկին գումարած 50 միլիոն դրամը գերազանցող ~~գումարի~~ մասի 0.025

	տոկոսի չափով
ը. 100 միլիոն դրամից ավել	բազային տուրքի ~~40~~70-ապատիկին գումարած 100 միլիոն դրամը գերազանցող ~~գումարի~~ մասի 0.01 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան բազային տուրքի ~~60~~80-ապատիկը
3) հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների (հայցադիմումների) համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
4) վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
5) սույն մասի 2-րդ կետով նախատեսված վարչական ակտերի վիճարկման արդյունքում կայացված դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝	վարչական դատարանում համապատասխան վարչական ակտի վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 10-ապատիկի չափով
6) վարչական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացրած դատական ակտերի դեմ բողոքներով՝	բազային տուրքի 20-ապատիկի չափով
7) գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոքներով	բազային տուրքի 10-ապատիկի չափով
8) վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	բազային տուրքի 30-ապատիկի չափով

9) սույն մասի 5-րդ կետով նախատեսված բողոքների քննության արդյունքում կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	վարչական դատարանում համապատասխան վարչական ակտի վիճարկման համար վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 20-ապատիկի չափով
10) վերաքննիչ վարչական դատարանի՝ հատուկ վարույթների գործերով կայացրած դատական ակտերի դեմ բողոքներով	բազային տուրքի 30-ապատիկի չափով
11) ամբողջությամբ կամ մասնակիորեն դատական ակտը բեկանելու և գործի վարույթը ամբողջովին կամ դրա մի մասը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վճռաբեկ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով

3. «Սնանկության մասին» օրենքով սահմանված կարգով դատարաններ տրվող դիմումների, դատարանի վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) սնանկության դատարան ներկայացվող դիմումների համար՝	
ա. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար՝	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
բ. ֆիզիկական անձանց (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերին) սնանկ ճանաչելու դիմումների համար՝	բազային տուրքի ~~250~~200-ապատիկի չափով
2) սնանկության դատարանի կայացրած վճիռների դեմ վերաքննիչ բողոքների	բազային տուրքի 30-ապատիկի չափով

համար՝	
3) սնանկության դատարանի կայացրած վճիռների դեմ բերված բողոքներով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ վճռաբեկ բողոքների համար՝	բազային տուրքի 40-ապատիկի չափով

4. Դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչներ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու, ~~հնչպես նաև դատական դեպարտամենտի կողմից սույն մասով սահմանված տեղեկություններ տալու տրամադրելու~~ համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝	բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով
2) հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկած կատարողական թերթի թղթային պատճենը տրամադրելու համար՝	բազային տուրքի չափով
3) գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից ներկայացված կամ գործում առկա այլ փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն	բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով

տալու համար՝	
4) գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար՝	պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի 50 տոկոսի չափով
5) դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար՝	պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի 50 տոկոսի չափով
~~6) սնանկության վարույթում չգտնվելու և սնանկ ճանաչված չլինելու վերաբերյալ, իրավաբանական անձի մասնակցությամբ հարուցված և չավարտված դատական գործերի բացակայության վերաբերյալ Դատական դեպարտամենտի կողմից տեղեկատվություն տրամադրելու համար~~	~~բազային տուրքի կրկնապատիկի չափով~~

5. Արտարժույթով պահանջ ներկայացվելու կամ պահանջի վիճարկման դեպքում պետական տուրքը հաշվարկվում է համապատասխանաբար հայցադիմումը կամ բողոքը ներկայացնելուն նախորդող օրացույցային ~~օրվա~~ օրը ~~դրությամբ~~ Կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:»:

Հոդված 2. Օրենքի 9.1 հոդվածում «տասնապատիկի» բառը փոխարինել «30-ապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 22. Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները**

1. Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

1) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

2) հայցվորները՝ ալիմենտի գանձման, ալիմենտի չափի ավելացման, ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձին պատասխանատվության ենթարկելու, ալիմենտը ժամանակին չվճարելու համար տուգանք բռնագանձելու կամ ալիմենտային պարտավորությունների ուշացմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հայցերով.

3) հայցվորները՝ խեղման կամ առողջությանը պատճառված այլ վնասի, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

4) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

5) հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

6) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող հայցադիմումների (դիմումների) գծով.

~~7) արդարացվածները՝ իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և ապօրինի դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով.~~

~~8~~7) արդարացվածները՝

ա. իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և ապօրինի դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով.

~~ա~~բ. նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով.

~~բ~~գ. ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով.

~~գ~~դ. նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով.

~~9~~8) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով.

~~10~~9) ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

ա. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների վերաբերյալ բողոքներով,

բ. մշակութային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

~~11~~10) բողոք բերող անձինք՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքներով.

~~12~~11) պետական մարմինները՝ սույն հոդվածի 1-ին մասի ~~10~~9-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքերում.

~~13~~12) դիմողները՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումների համար.

~~14~~13) դիմողները կամ հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29.3-րդ և 31.3-րդ գլուխներով նախատեսված գործերով.

~~15~~14) հայցվորները՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով.

~~16) ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ կենսաթոշակային ապահովության ոլորտում լիազորված մարմնի ընդունած որոշման դեմ բողոքներով հայցերով.~~

~~17~~15) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

~~18~~16) դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով.

~~19~~17) ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված գործերով.

~~20~~18) դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ դիմումներով.

~~21~~19) ապաստան հայցողները և փախստականները՝

ա. ապաստանի հայցի և փախստականի ճանաչման վերաբերյալ ընդունված որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցերով.

բ. ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի շրջանակներում իրենց իրավունքների և երաշխիքների խախտման վերաբերյալ հայցերով.

~~22~~20) հոգեբուժական կազմակերպությունները՝ քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

~~23~~21) բժշկական կազմակերպությունները կամ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ քաղաքացուն

բժշկական ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

~~24~~22) հարկադիր ~~կատարման ծառայողները~~կատարողը՝ կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի~~՝ օրինական ուժի մեջ մտած~~ վճռի վերանայման վերաբերյալ դիմումներով.

~~25~~23) ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը և լուծարային կառավարիչը՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով.

~~26~~24) պարտապանը՝ կամավոր սնանկության դիմումներով.

~~27~~25) սնանկության գործով կառավարիչները (ժամանակավոր կառավարիչները)՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների համար, ինչպես նաև դատական ակտը իրենց վարձատրության մասով բողոքարկելու համար.

~~28~~26) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր կողմից ներկայացվող հայցերով.

~~29~~27) հայցվորները՝ պետական նպաստների (այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման), պետական կենսաթոշակների, սոցիալական ապահովության ծրագրերով վճարվող դրամական այլ վճարների, սոցիալական ապահովագրության վճարների նշանակման, վճարման, հաշվարկման, վերահաշվարկման և այլ հայցերով.

~~30~~28) հայցվորը՝ Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերով.

29) դիմողները՝ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողին կամ այլ քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործերով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

3. Դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկվելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

4. Միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով պետական տուրք չի գանձվում:

5. Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար պետական տուրք չի գանձվում:»:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «ժգ» կետ.

«ժգ) ռազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ դատարանի կողմից մահացած ճանաչված զինծառայողի կամ այլ քաղաքացու ժառանգի դիմումի հիման վրա ժառանգության ընդունման կամ դրանից հրաժարման, ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տրամադրելու, օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ (բացառությամբ նվիրատվության պայմանագրերի վավերացման), 17-րդ և 21.2-րդ մասերով նախատեսված նոտարական գործողություններ իրականացնելու համար:»:

Հոդված 45. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետից հանել «կամ դատավորները» բառերը:

Հոդված 56. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել նոր «բ1» կետ.

«բ1) երբ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, մերժել է այն հայցը, որով հայցվորը ազատված է եղել պետական տուրքի վճարումից.».

2) «գ» կետում «անձը» բառից հետո լրացնել «, կամ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը առանց քննության թողնելու դեպքում» բառերը.

3) լրացնել նոր «գ1» կետ.

«գ1) գործը ընդհանուր հայցային վարույթի կարգով վարույթ ընդունելուց հետո գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դեպքում.».

4) լրացնել նոր «դ1» կետ.

«դ1) եթե առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վճարման կարգադրությունը վերացնելու մասին՝ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու կամ վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության դեպքում.»:

Հոդված ~~6~~7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~դրա~~ պաշտոնական հրապարակման օրվանից ~~հաջորդող տասներորդ օրը~~վեց ամիս հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ, 14-րդ, 17-րդ և 29-րդ կետերը, 3-4-րդ մասերը և սույն օրենքի 4-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~2~~3. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների (դիմումների) և դրանց հիման վրա հարուցված գործերի նկատմամբ:

~~3~~4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումների (դիմումների) քննության արդյունքում կայացված դատական ակտերի, այդ թվում՝ հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու մասին որոշումների բողոքարկման դեպքում կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը, ներառյալ՝ դատարաններում պետական տուրքի գծով սահմանված արտոնությունները:

~~4~~5. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումները (դիմումները) կամ բողոքները վերադարձնելուց հետո դրանք սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կրկին ներկայացնելու դեպքում դրանց նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

~~5~~6. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումներում (դիմումներում) կամ բողոքներում նշված պահանջը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձելիս կիրառման են ենթակա մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-832-29.12.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	Առաջարկում ենք ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվող «Պետական տուրքի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել նոր 6-րդ կետ՝ սահմանելով պետական տուրք սնանկության վարույթում չգտնվելու և սնանկ ճանաչված չլինելու վերաբերյալ, ինչպես նաև իրավաբանական անձի մասնակցությամբ հարուցված և չավարտված դատական գործերի բացակայության վերաբերյալ	Չի ընդունվել	Չի ընդունվել

			Դատական դեպարտամենտի կողմից տեղեկատվություն տրամադրելու համար՝ բազային տուրքի կրկնապատիկի չափով: Նշված առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբա-ժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 36.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով Դատական դեպարտամենտի համար օրենսդրի կողմից պարտականություններ են սահմանվել սեղմ ժամկետներում տեղեկանքներ տրամադրելու վերաբերյալ, ինչը հավելյալ ռեսուրսներ է պահանջում նշված գործառույթն իրականացնելու համար: Նշված փոփոխությամբ պայմանավորված առաջարկում ենք Նախագծով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում «տալու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև դատական		

			դեպարտամենտի կողմից որոշակի տեղեկություններ տրամադրելու» բառերը:		
2.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը առաջարկում ենք հանել Նախագծից, քանի որ արտարժույթով հայցագնի հիման վրա պետական տուրքի հաշվարկման հստակ կանոն սահմանելու դեպքում կարող են խնդիրներ առաջանալ դրանց հաշվարկի հետ կապված՝ կախված հայցադիմումի ներկայացման պահին տվյալ օրվա փոխարժեքի փոփոխության հետ, այնինչ այդ հարցը դատական պրակտիկայում լուծում է ստացել:	Չի ընդունվել	Չի ընդունվել
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասում «ներկայացնելու օրվա դրությամբ» բառերը փոխարինել «ներկայացնելուն նախորդող օրացույցային օրը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի «ա» ենթակետում և 10-րդ կետի «ա» ենթակետում «ոչ ավելի» բառերից հետո լրացնել «բազային տուրքի» բառերը՝ հետագա տարընթերցումներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերում լրացնել նոր ենթակետեր՝ սահմանելով համապատասխանաբար բազային	Ընդունվել է	Ընդունվել է

			տուրքի 10-ապատիկի և 20-ապատիկի չափով պետական տուրք կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների վերաբերյալ բողոքների համար: Նշված առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված որոշումների դեմ բողոքների համար պետական տուրքի գծով արտոնությունը սահմանված է միայն ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների համար, սակայն միաժամանակ, բացակայում էր դրանց վերաբերելի պետական տուրքի դրույքաչափ սահմանող կարգավորումը արտոնությունից չօգտվող անձանց համար:		
6.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ»-ից «ը» ենթակետերում «գերազանցող» բառից հետո «գումարի» բառը փոխարինել «մասի» բառով՝ հետագա տարընթերցումներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս	Նախագծով նախատեսվող Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ե»-ից «ը» ենթակետերում	Ընդունվել է	Ընդունվել է

			համապատասխանաբար «20-ապատիկին», «25-ապատիկին», «30-ապատիկին» և «40-ապատիկին» բառերը փոխարինել «25-ապատիկին», «30-ապատիկին», «50-ապատիկին» և «70-ապատիկին» բառերով, իսկ «ը» ենթակետում «60-ապատիկը» բառը փոխարինել «80-ապատիկը» բառով: Նշված փոփոխությունները պայմանավորված են Նախագծով առաջարկվող վարչական գործերի համար սահմանված պետական տուրքի հաշվարկման բանաձևային եղանակի հիմքում դրված բանաձևային հաշվարկի ճշգրտմամբ: Մասնավորապես, խնդրո առարկա «ե» կետից սկսված կարող էր ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ ավելի փոքր չափով դրամական արտահայտությամբ պատասխանատվություն սահմանող վարչական ակտի վիճարկման համար պահանջվեր ավելի շատ պետական տուրք, քան ավելի մեծ չափով դրամական արտահայտությամբ պատասխանատվություն սահմանող վարչական ակտի վիճարկման համար:		
8.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսվող արտոնությունը նախատեսել որպես նույն մասի 8-րդ կետի առանձին ենթակետ, քանի որ դրանք վերաբերում են նույն սուբյեկտին:	Ընդունվել է	Ընդունվել է

9.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը հանել: Առաջարկը պայմանավորված է, այն հանգամանքով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 169[18] հոդվածով և 198[2] հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը կենսաթոշակներին վերաբերող իրավախախտումների մասով (բացի հարկային տեսչության մարմինների իրավասությանը վերապահված գործերից) քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը կամ տեղակալը կամ տարածքային ստորաբաժանումների ղեկավարները: Իր հերթին, 198[2] հոդվածը ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 169[18] հոդվածով նախաատեսված իրավախախտման սուբյեկտ են ոչ թե ֆիզիկական անձինք, այլ նրանց գործատուները: Ուստի, ֆիզիկական անձանց համար նման արտոնություն սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում «ճանաչելու» բառից հետո	Ընդունվել է	Ընդունվել է

			լրացնել «, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու» բառերը, ինչը պայմանավորված է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան վարույթի վերաբերյալ առկա կարգավորումներով:		
11.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետում «կատարման ծառայողները» բառերը փոխարինել «կատարողը» բառով, իսկ «՝ օրինական ուժի մեջ մտած» բառերը հանել, ինչը պայմանավորված է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան վարույթի վերաբերյալ առկա կարգավորումներով:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծով նախատեսվող Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր արտոնություն՝ հետևյալ բովանդակությամբ. «դիմողները՝ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողին կամ այլ քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործերով»:	Ընդունվել է	Ընդունվել է

13.	Կառավարություն	Նախագծում լրացնել նոր հոդված	Առաջարկում ենք սահմանել նոր արտոնություն՝ Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսելով նոր կետ. «ռազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ դատարանի կողմից մահացած ճանաչված զինծառայողի կամ այլ քաղաքացու ժառանգի դիմումի հիման վրա ժառանգության ընդունման կամ դրանից հրաժարման, ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տրամադրելու, օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ (բացառությամբ նվիրատվության պայմանագրերի վավերացման), 17-րդ և 21.2-րդ մասերով նախատեսված նոտարական գործողություններ իրականացնելու համար:»:	Ընդունվել է	Ընդունվել է
14.	Կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք փոփոխել Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ սահմանելով Օրենքի ուժի մեջ մտնելու ավելի երկար՝ մեկամսյա ժամկետ:	Չի ընդունվել	Չի ընդունվել

15.	Կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 6-րդ հոդվածի վերնագրերում «Եզրափակիչ» բառից հետո լրացնել «մաս» բառը	Ընդունվել է	Ընդունվել է
16.	Կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք փոփոխել Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 6-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածի 1-ին մասը՝ սահմանելով դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար՝ վեցամսյա ժամկետ:		
17.	Կառավարություն	Նախագծի հիմնավորումներ	Առաջարկում ենք Նախագծի հիմնավորումներում կատարել հետևյալ փոփոխությունները. 1) 1.1-ին կետում լրացնել «Արդարադատության արդյունավետության» եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից 2020թ.-ին կազմված «Եվրոպական դատական համակարգեր» գնահատման հաշվետվությունում ներկայացված դատական բյուջետավորման վերաբերյալ որոշակի վիճակագրական տվյալներ. 2) 1.1-ին կետում ավելի մանրամասն ներկայացնել Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները պետական տուրքի ինստիտուտի վերաբերյալ. 3) 1.2-րդ կետում ներկայացնել վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար պետական տուրքի հաշվարկման բանաձևային եղանակի պատկերավոր օրինակ,	Ընդունվել է	Ընդունվել է

			ինչը կնպաստի սահմանված հաշվարկային բանաձևի ճիշտ ընկալմանը և հետագայում նախատեսված կարգավորման պատշաճ մեկնաբանմանը: 4) լրացնել նոր կետ՝ հիմնավորելով արտարժույթով ներկայացվող պահանջների հաշվարկի վերաբերյալ նախատեսվող կարգավորումների անհրաժեշտությունը. 5) վիճակագրական տվյալների հիման վրա ներկայացնել, թե որոշակի դեպքերում տեսականորեն նույնաքանակ գործերի դեպքում, որքան պետական տուրք կգանձվի փոփոխված դրույքաչափերի պայմաններում:		
18.	Լուսավոր Հայաստան խմբակցություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքում լրացվող 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի միջև լրացնել նոր կետ՝ «հայցվորները՝ անհայտ կորած զինծառայողներին կամ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած քաղաքացիական անձանց անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումներով.»: Քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *շահագրգիռ անձանց դիմումով*	Ընդունվել է Փոփոխությունը կատարվել է սույն ամփոփաթերթի 3-րդ կետով առաջարկվող տարբերակով:	Ընդունվել է

			դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին: Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանի կողմից անհայտ բացակայող ճանաչվել, եթե երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չկան զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին: Խնդիրը կայանում է նրանում, որ վերջիններիս ընտանքիները շատ հաաճախ գտնվում են սոցիաալապես անապահով վիճակում: Իսկ դատարանի կողմից դիմումը/հայցը կարող է. հետ վերադարձվել՝ պետական տուրքը չվճարված լինելու հետևանքով: Ըստ այդմ՝ առաջարկում ենք խնդրո առարկա գործերով նախատեսել պետական տուրքի արտոնություն՝ ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած անձանց, այդ թվում՝ զինծառայողների ընտանիքների անդամների համար:		

19.	Լուսավոր Հայաստան խմբակցություն	Նախագծի 6-րդ հոդված	Ելնելով երկրի սոցիալ-տնտեսական ոչ բարվոք իրադրությունից՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների գործողության մեջ մտնելու վերաբերյալ դրույթներով (Նախաագծի 6-րդ հոդված) սահմանել, որ դրանք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից:	Չի ընդունվել Կարծում ենք, որ Նախագծի խնդրո առարկա հոդվածների ուժի մեջ մտնելու նման երկարատև ժամկետ (շուրջ 1 տարի 10 ամիս) նախատեսելու անհրաժեշտությունը հիմնավորված չէ: Միևնույն ժամանակ, նկատենք, որ նշված ժամանակահատվածում բացառված չէ երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների փոփոխությունը ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով:	Չի ընդունվել
20.	պատգամավոր Արթուր Դավթյան	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «20-ապատիկ» բառը փոխարինել «15-ապատիկ» բառով:	Չի ընդունվել Հատուկ վարույթներով գործեր քննելիս դատարանները որոշակի ծավալի աշխատանք են կատարում՝ ուղղված գործի արդյունավետ և պատշաճ քննությանը, ինչն էլ հիմք է հանդիսացել Նախագծով առաջարկվող դրույքաչափի սահմանման համար: Նշված հանգամանքով	Չի ընդունվել

				պայմանավորված՝ կարծում ենք վճարման ենթակա պետական տուրքի առաջարկվող դրույքաչափ սահմանելը նպատակահարմար չէ:	
21.	պատգամավոր Արթուր Դավթյան	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը առանձնացնել «ա.» և «բ.» ենթակետերով: ա. ենթակետով սահմանել «արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումների համար բազային տուրքի 10-ապատիկի չափով պետական տուրք», իսկ բ. ենթակետով՝ «օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումների համար՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրք»:	Մասամբ է ընդունվել Նախագծում խնդրո առարկա վարույթների մասով կատարվել է տարանջատում, սակայն որպես պետական տուրքի գանձման առանձին օբյեկտ նախատեսվել է օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներ ներկայացնելը՝ սահմանելով բազային տուրքի 50-ապատիկի չափով պետական տուրք առաջարկվող 100-ապատիկի փոխարեն, քանի որ կարծում ենք՝ նման մեծ չափով տուրք սահմանելը բավարար հիմնավորված չէ և չի բխում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառումը Հայաստանում զարգացնելու	Ընդունվել է

				տրամաբանությունից: Իր հերթին, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներ ներկայացնելը դիտարկվել է որպես պետական տուրքի գանձման առանձին օբյեկտ՝ սահմանելով պետական տուրք բազային տուրքի 20-ապատիկի չափով, քանի որ օտարեկրյա դատական ակտը կարող է կայացվել տարատեսակ վեճերի արդյունքում, օրինակ, ամուսնաընտանեկան, ինչպիսի դեպքում առաջարկվող 100-ապատիկի կամ 50-ապատիկի չափով պետական տուրք սահմանելը կարող է էապես սահմանափակել դատարանի մատչելիության իրավունքը: Ի տարբերություն, նման դեպքերի, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր	

				կատարման դեպքում, ըստ էության, գործ ունենք բարդ առևտրային վեճերի հետ, որոնց դեպքում սահմանված դրույքաչափը արդարացված է:	
22.	պատգամավոր Արթուր Դավթյան	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի «բ», «գ», «դ», «ե» ենթակետեր	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի բ., գ., դ., ե. ենթակետերում «30-ապատիկ» բառերը փոխարինել «20-ապատիկ» բառերով:	Մասամբ է ընդունվել Առաջին ատյանի դատարանում ոչ դրամական պահանջներով հայցադիմումներ ներկայացնելու համար սահմանվում է պետական տուրք՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով: Նման պարագայում, կարծում ենք, որ վերաքննություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքը պետք է լինի ավելի քան առաջին ատյանում է, քանի որ գործի քննությունը վերաքննիչ դատարանում իրականացվում է կոլեգիալ կազմով, ինչպես նաև նման կարգավորումը նպատակ է հետապնդում բացառել բողոքարկման իրավունքի չարաշահման	Ընդունվել է

				և անհիմն բողոքներով վերաքննիչ դատարանը ծանրաբեռնելու դեպքերը: Ինչ վերաբերում է հատուկ վարույթների գործերով կայացված դատական ակտերի բողոքարկման համար սահմանված դրույքաչափին, ապա, կրկին, հաշվի է առնվել վերաքննիչ դատաարանի կողմից տարվող աշխատանքի ծավալը՝ ուղղված գործի արդյունավետ և պատշաճ քննությանը: Միևնույն ժամանակ, «գ» և «դ» կետերի վերաբերյալ առաջարկն ընդունվել է և կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
23.	պատգամավոր Արթուր Դավթյան	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «գ», «դ», «ե» ենթակետեր	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի գ., դ., ե. ենթակետերում «40-ապատիկ» բառերը փոխարինել «30-ապատիկ» բառերով:	Մասամբ է ընդունվել Տե՜ս նախորդ կետը:	Ընդունվել է

24.	պատգամավոր Արթուր Դավթյան	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ա. ենթակետերում «250-ապատիկ» բառը փոխարինել «200-ապատիկ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
25.	պատգամավոր Արթուր Դավթյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը փոխփոխել հետևյալ կերպ. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:	Չի ընդունվել Տե՛ս սույն ամփոփաթերթի 7-րդ կետի հիմնավորումները:	Չի ընդունվել
26.	պատգամավոր Արուսյակ Զուլհակյան	Նախագծի 6-րդ հոդված	Օրենքի ուժի մեջ մտնելու համար սահմանել տարբերակված ժամկետներ՝ նախատեսելով Նախագծով նախատեսվող դատարաններում պետական տուրքի գծով նոր արտոնությունների ուժի մեջ մտնելու ավելի կարճ՝ 10-օրյա ժամկետ:	Ընդունվել է	Ընդունվել է